



## Տնօրենի խոսքը

Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը ճանաչում է ընտանիքը որպես հասարակության բնական և հիմնական բջիջ: Իրավամբ, մարդու և քաղաքացու ձևավորումը, կայացումն ու զարգացումը, նրա առողջ, երկար և ստեղծագործ կյանքը հնարավոր է բացառապես ապահով և անվտանգ միջավայրում: Նման ապահով ու անվտանգ միջավայրի ձևավորումն ու սնուցումը ընտանիքի հիմնական գործառույթն է:

Ցավոք, աղքատության ճիրաններում հայտնված ընտանիքը հաճախ չի կարողանում լիարժեքորեն կատարել այդ հիմնական գործառույթը: Երբեմն սակայն, աղքատությունը չէ պատճառը, այլ ընտանիքում բուն դրած հրեշ՝ բռնությունը, որը ընտանիքը ապահով և անվտանգ միջավայրից վերածում է մարտադաշտի, ուր մեծ ու մանուկ, մայր ու որդի քնում և արթնանում են կյանքի ու առողջության սպառնալիքի ստվերում: Նման ընտանիքում անհոգ ուրախության, ջերմ հոգատարության փոխարեն բուն են դնում անվերջանալի տառապանքն ու բռնությունը, հաճախ՝ լուռ ու աստիճանաբար սահազնացող:

Համայնքը, հասարակությունն ու պետությունը պիտի աջակցության ձեռք մեկնեն ընտանիքին՝ վերականգնելու դրա բոլոր անդամների համար ապահով ու անվտանգ միջավայր ձևավորելու գործառույթը: Ավանդ, դա երբեմն չի հաջողվում, և ընտանիքի անդամները շարունակում են գոյատևել անապահով ու անբարենպաստ միջավայրում: Ընտանիքը վերջնականապես դադարում է կատարել այն գործառույթը, որին կոչված է: Ավելին, անում է ճիշտ հակառակը: Նման պարագայում հանգուցալուծումը, թերևս, դատապարտված ընտանիքի լուծարումն է՝ անվտանգ ու ապահով նոր միջավայր՝ նոր ընտանիք ձևավորելու սկիզբը:

Ընտանեկան բռնությունը, գենդերային բռնությունը, բռնության ցանկացած արտահայտություն սահազնանում է այնտեղ, ուր բռնացողն ինքնատիրապետման ներուժ չունի, իսկ հասարակությունն ու պետությունը՝ զսպման իրական լծակներ: Նման իրավիճակում բռնությունն օր-օրի սահազնանում է: Վիրավորանքն ու հարկադրանքն աստիճանաբար, հաճախ աննկատ, վերածվում են մարմնական ու հոգեկան բռնության, նվաստացման, չհանդիպելով դիմադրության՝ ծավալվում ու դառնում ընտանեկան աղետ՝ ամենօրյա ծեծ ու բռնություն, անգամ մահ: Ցավալիորեն հաճախ ենք նման երևույթների ակնատես դառնում: Նման զարգացումները հնարավոր են բացառապես անպատժելիության մթնոլորտում, երբ բռնացողը համարում է, որ իր արածի դեմ, ոչ ոք, այդ թվում՝ զոհը, հասարակությունը, պետությունը չեն պահանջելու հատուցում: Ուստի բռնության ծավալումը կանխելու նպատակով անհրաժեշտ է կտրել անպատժելիության արատավոր շղթան:

Հայաստանում ընտանեկան բռնությունը կանխելու կոչված մարմինները, ցավոք, չունեն ընտանեկան բռնության «խրախճանքին» դիմակայելու, անպատժելիության ընկալումը կտրտելու և ընտանիքը կամ գոնե նրա անդամին ժամանակին փրկելու, աղետը կանխելու բավարար լիազորություններ ու հմտություններ: Ավելին, բռնությունը կանխելու կոչված մարմինների անկարողությունը, երբեմն նաև՝ սխալ մոտեցումն ու վերաբերմունքը խնդրին այս կամ այն փուլում դառնում են անպատժելիության խորացման ու ընտանեկան բռնության հետագա սահազնացման պատճառ: Հաճախ հենց իրավապահ մարմինների կողմից արդյունավետ միջամտելու անհնարիտությունն է բռնացողի ներաշխարհում անպատժելիության նոր ալիք, իսկ գոհի հոգում հուսալքություն ծնում:

Ուստի, ընտանեկան բռնության կանխարգելման նպատա-

ՄԶՄԿ Լրատուն հրապարակվում է 2010թ. ապրիլից: Լրատունն նպատակ ունի բարելավելու մեր հաղորդակցությունը Հայաստանում և տարածաշրջանում՝ քաղաքացիական հասարակության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև զարգացման աջակցող կառույցների՝ մեր գործընկերների հետ: Հուսով ենք, որ Լրատունն օգտակար կլինի Ձեզ համար, հնարավորություն կընձեռի տեղեկանալ մեր ընթացիկ աշխատանքին, կներկայացնի մեզ ու մեր գործունեությունը:

կով կարևորագույն նշանակություն ունի առաջին հերթին անպատժելիության վերացումն ու բռնության հանդեպ բացարձակ անհանդուրժողականության ձևավորումը: Անպատժելիությունը վերացնելու համար հարկ է, թերևս, քրեականացնել երևույթը, իրավապահ և արդարադատության մարմիններին օժտել նոր լիազորություններով, գիտելիքով, հմտություններով ու վարքով: Բռնությունն ընտանիքում անհրաժեշտ է բացառել ամեն գնով:

Հայ դասակարգի տրամաբանությունն անառարկելի է. ազգերի գործությունը ընտանիքի մեջ է. գորեղ է այն ազգը, ով ունի զորավոր ընտանիք: Անվիճելի է նաև, որ բռնության ճիրաններում մաքառող ընտանիքները թուլացնում են պետությունը, քայքայում դրա հիմքերը: Ընտանեկան բռնությունը, այս առումով, պետության և հասարակության դեմ ուղղված հանցանք է: Ցավոք, դրա գիտակցումը անցումային մեր հասարակության մեջ դեռևս չի արմատավորվել: Չի արմատավորվել նաև մեր օրենսդրության մեջ և իրավա-կիրառական պրակտիկայում: Իրավիճակն ավելի ցայտուն է համեմատության մեջ: Այսպես, գենքի անօրինական ձեռքբերման կամ կրելու համար օրենսդիրը ծանր պատիժ է սահմանել: Պատասխանատվությունից ու պատժից զարտուղի ճանապարհներով ազատվել հնարավոր է, թերևս, մեծ ջանքեր գործադրելով՝ մեծ ծախսերի ու կապերի շնորհիվ միայն: Մինչդեռ ընտանեկան բռնության ծիլերն անօրինական կերպով գենքն ու գինամթերք պահելուց շատ ավելի վտանգավոր են, քանի որ մի օր, վստահաբար, բանդելու են ընտանիքը՝ պետությունը հիմքը:

Ընտանեկան բռնությունն, անկասկած, թե՛ անձի, թե՛ հասարակության, թե՛ պետության դեմ հանցանք է: Ուստի ընտանեկան բռնության համարժեք քրեականացումն այլընտրանք չունի: Այլընտրանք չունի նաև իրավապահ և արդարադատության մարմինների կարողությունների հետագա զարգացումը ընտանեկան և գենդերային բռնության կանխման և զոհերին պատշաճ ու ժամանակին աջակցություն ցուցաբերելու գործում: Զաղաքացիական հասարակության կառույցներն ու դաշինքներն այստեղ ասելիք ու անելիք ունեն: Նրանք են հաճախ գոհի վերջին հույսն ու ապաստանը, նրա ձայնն ու ոտնահարվող իրավունքների պաշտպանը: Մեծ է նրանց հոգսն ու պատասխանատվությունը զոհերին աջակցության գործում: Ու թեև բռնության հետևանքների դեմ պայքարն ու զոհերին աջակցությունը շնորհակալ ու անփոխարինելի գործ է, ժամանակն է շեշտը դնել երևույթի կանխման վրա: Օ՛ր առաջ: Չէ որ անպատժելիությունը չափազանց վարակիչ է, իսկ բռնությունը՝ խիստ վտանգավոր:

**Թևան Պողոսյան**  
**Գործադիր տնօրեն**

# Ծրագրերի ընտրանի

*Աջակցություն հայրենիք վերադարձող 33 քաղաքացիներին*

2010թ. հուլիսից ՄՉՄԿ-ն Նիդերլանդների Թագավորության Արդարադատության նախարարության Հայրենադարձության և վերադարձի ծառայության հետ համագործակցությամբ իրականացնում է Նիդերլանդների Թագավորությունից վերադարձող Հայաստանի քաղաքացիների վերաինտեգրմանն աջակցության ծրագիր: Ակնկալվում է, որ ծրագրի շրջանակներում իրական հնարավորյուն կստեղծվի շուրջ 75 ՀՀ քաղաքացիների համար լիարժեքորեն ինտեգրվելու ՀՀ տնտեսության և հասարակության մեջ և լիարժեքորեն իրացնելու ՀՀ քաղաքացու և մարդու հիմնարար իրավունքներն ու պարտականությունները:

Հոկտեմբերի կեսերին ՄՉՄԿ-ն «Աջակցություն Նիդերլանդներից վերադարձած ՀՀ քաղաքացիների վերաինտեգրմանը» ծրագրի շրջանակներում հրավիրեց Համակարգող խորհրդի առաջին նիստը: ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության, ՀՀ ՓՄՁ գարգացման ազգային կենտրոնի, ՀՀ ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայության, Անանիա Շիրակացու անվան կրթահամալիրի, «Դիագնոստիկա» բժշկական կենտրոնի, ՄՉՄԿ-ի ներկայացուցիչները քննարկեցին համագործակցության հնարավորությունները և ծրագրի իրականացման մեխանիզմները:

Դեկտեմբերի 19-ին ՄՉՄԿ և ՏԿՆ Միգրացիայի պետական ծառայության ներկայացուցիչները ընդունեցին Նիդերլանդներից վերադարձած առաջին ՀՀ քաղաքացուն: Ծրագիրն իրականացնողները դեռևս օդանավակայանում նրան բժշկական և հոգեբանական օժանդակություն ցուցաբերեցին, տեղեկացրեցին աջակցության մասին և առաջարկեցին այցելել Միգրացիայի պետական ծառայություն՝ հետագա օժանդակություն ստանալու նպատակով:

## *ՄՉՄԿ-ն առաջնորդում է գեղեցիկ բռնության դեմ պայքարի կոնսորցիումը*

2010թ. սեպտեմբերի վերջին քառասունհինգ ուսանողներ և ավագ դպրոցի աշակերտներ Ծաղկածորում և Երևանում մասնակցեցին գեղեցիկ բռնության բռնության թեմայով ուսուցանողների եռօրյա վերապատրաստման դասընթացներին: Դրանց նպատակն էր մասնակիցներին համապատասխան գիտելիքներ և հմտություններ տրամադրել գեղեցիկ բռնության վերաբերյալ և պատրաստել նրանց որպես ապագա ուսուցանողներ: Դասընթացները կազմակերպվել էին Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կողմից՝ ՄՉՄԿ-ի Բնակչության հիմնադրամի օժանդակությամբ իրականացվող «Գեղեցիկ բռնության դեմ պայքարի» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացնելու նպատակով ձևավորվել է Հայաստանում գեղեցիկ բռնության դեմ պայքարի Կոնսորցիում, որը գլխավորում է ՄՉՄԿ-ն:

Ծրագրի շրջանակներում 2010թ. հոկտեմբերին վերապատրաստում են անցել ազգային մեխանիզմի և օժանդակ մարմինների ավելի քան 250 ներկայացուցիչներ: Դասընթացներ են իրականացվել նաև մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերի գեղեցիկ բռնության հարցերով պատասխանատուների, Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների և աշխատանքային խմբերի պաշտոնյաների համար: Բոլոր դասընթացները կազմակերպվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման մարզային մարմիններն ու նրանց գործընկերների օժանդակությամբ:

Նույն ծրագրի շրջանակներում 2010թ. հոկտեմբերին վերապատրաստում են անցել շուրջ 270 սոցիալական աշխատողներ, բժիշկներ, բուժքույրեր, կլինիկական օրդինատորներ, ոստիկաններ Հրազդանի, Վանաձորի, Ալավերդի, Արմավիրի, Մեծամորի, Գյումրու, Երևանի և Հայաստանի այլ համայնք-

ներից: Դասընթացների ընթացքում իրականացվել է ԱՄՆ-ում և Հայաստանում ընտանեկան բռնության առանձին դեպքերի վերլուծություն: Մասնակիցները հնարավորություն են ունեցել համեմատել և համադրել համանման իրավիճակներում ամերիկյան և հայաստանյան ոստիկանների իրավասություններն ու արձագանքելու գործնական կարողություններն ու հնարավորու-



Երիտասարդները քննարկում են ընտանեկան բռնության կանխարգելման գործում ոստիկանության դերը: Նոյեմբեր 2010թ.: Երևան:

յունները: Վարժության նպատակն էր ներկայացնել հայ ոստիկաններին ընտանեկան բռնության կանխման և հետապնդման միջազգային փորձը՝ կոնկրետ օրինակների քննարկման միջոցով: Վերապատրաստման դասընթացների մասնակիցներից ընտրված 10 բուժաշխատողներ և ոստիկանության 10 պաշտոնյաներ մասնակցել են ՄՉՄԿ մասնագետների կողմից իրականացվող դասավանդողների պատրաստման երկօրյա դասընթացների:

Երևանում և Գյումրիում կազմակերպված գեղեցիկ բռնության թեմայով վերապատրաստման դասընթացներին մասնակցել են Արբեշյանից բռնազաղթած քաղաքացիներ և ՀՀ տարածքային կառավարման նախարարության առընթեր Միգրացիոն պետական ծառայության աշխատակիցներ: Դասընթացների նպատակը ոչ միայն մասնակիցներին գեղեցիկ բռնության և դրա հետևանքների մասին իրազեկումն էր, այլ նաև նրանց գեղեցիկ բռնության դեմ պայքարի և կանխման գիտելիքներով և հմտություններով օժտելը:

2010թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Երևանում և ՀՀ տարբեր մարզերում կազմակերպված մեկօրյա 40 դասընթացների մասնակցել են ավելի քան 800 ուսանողներ, ավագ դպրոցի աշակերտներ, դասախոսներ, ուսուցիչներ, լրագրողներ, համայնքային գործիչներ, փախստականներ, քաղաքային ու գյուղական համայնքների բնակիչներ:

ՄՉՄԿ-ն կոնսորցիումի անդամ «Տաթև 95» ՀԿ-ի և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ համագործակցությամբ մշակել են գեղեցիկ բռնության բռնության գոհերին հոգեբանական օգնություն ցուցաբերող մասնագետների վերապատրաստման նյութերի ժողովածու: Վերոհիշյալ թեմայի շրջանակներում Տաթև 95-ի կողմից վերապատրաստվել են 15 հոգեբաններ, որոնք իրենց հմտություններն ու գիտելիքները գործի են դրել ծրագրի շրջանակներում գեղեցիկ բռնության վտանգի ենթակա ավելի քան 150 կանանց համար կազմակերպված վերապատրաստման դասընթացների ընթացքում: Վերապատրաստման դասընթացների մասնակիցները ստացել են համապատասխան գիտելիքներ և օժտվել են ընտանիքում, աշխատավայրում և հասարակությունում գեղեցիկ բռնությանը դիմակայելու հմտություններով: Վերապատրաստման դասընթացը Կոնսորցիումի գործընկերների հնարավորություն ստեղծմանաչել խոցելի խմբերի իրական մտահոգություններն ու կարիքները: Մասնակիցներն ընդգծել են կանանց իրավունքների պաշտպանության և բռնությունը կանխարգելելու և պատժելու

իրավական մեխանիզմների անկատարությունը, ինչպես նաև այս քննազավառումը առկա էական բացերը: Դասընթացից հետո գենդերային բռնության 50 կին դիմել են Տաթև 95-ին հետագա հոգեբանական օգնության խնդրանքով: Բռնության զոհերի մի սովոր հատված էլ Տաթև 95-ին է դիմել այլ բուժհաստատությունների և ԶԿ-ների միջոցով:

«Ակտիվության 16-օրյակ ընդդեմ գենդերային բռնության» քարոզարշավի շրջանակներում ՄՉՄԿ-ն ուսանողների համար կազմակերպեց վերապատրաստման դասընթաց: ՄՄԿ-ի՝ Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օրվան նվիրված միջոցառմանը մասնակցեցին տարբեր բուհերի ավելի քան քսան ուսանողներ: Դասընթացից հետո մասնակիցները նշում էին, որ այն հնարավորություն ընձեռեց բարձրացնել իրենց իրազեկվածությունը գենդերային բռնության խնդրի, վերջինիս ունեցած հետևանքների և դրա դեմ պայքարի միջոցների վերաբերյալ: Սեմինարը մեկնարկեց թեմայի տեսական ներկայացմամբ, որից հետո իրականացվեց ԶԶ քաղաքացի Չարուհի Պետրոսյանի ողբերգական դեպքի և ԱՄՆ-ում տեղի ունեցած մեկ այլ բռնության դեպքի վերլուծություն: Դեպքերը լուսաբանող փաստավավերագրական ֆիլմերը դիտելուց հետո մասնակիցները քննարկեցին այն հնարավոր նախադրյալներն ու նախապայմանները, որոնց առկայության դեպքում ներկայացված դեպքերը կարող էին ունենալ այլ հանգուցալուծում: Սեմինարի ավարտին անցկացված դերախաղի ընթացքում մասնակիցները ներկայացրեցին ոստիկանության արձագանքն ու գործողությունները գենդերային բռնության դեպքերում:

2010թ. դեկտեմբերին ՄՉՄԿ-ն նախաձեռնել է Կոնսորցիումի գործընկերների կողմից վերջին տարիներին իրականացված վերապատրաստման դասընթացների ազդեցության և արդյունքների գնահատում: Գնահատողներն անցկացրել են փորձագիտական և հեռախոսային հարցաթերթերով հարցազրույցներ: Ձեռնարկն ամփոփում է հատուկ թիրախ խմբերին համապատասխան հմտություններ և գիտելիքներ հաղորդելու նոր մեթոդաբանություն: Այն պարունակում է առանձին բաժին՝ նվիրված ուսուցման մեթոդաբանությանը, որը արդյունավետորեն կարելի է կիրառել վերապատրաստողների ուսուցման նպատակով:

Գնահատման ընթացքում պարզվել է, որ դիտարկվող ժամանակահատվածում ծրագրի մեջ ընդգրկվել են շուրջ 4000 շահառուներ, (կանայք և տղամարդիկ), որոնց հաղորդվել են գիտելիքներ և հմտություններ գենդերային բռնության և ընդհանրապես գենդերային հարցերի վերաբերյալ: Գործընկերներին հաջողվել է զգալիորեն փոխել ոչ միայն դասընթացների մասնակիցների վերաբերմունքը, այլ նաև ներմուծել նոր գիտելիքները նրանց ընտանիքներ, այդպիսով շուրջ 4000 ընտանիքների ընդգրկել անուղակի թիրախ խմբերի ցանկում:

Գնահատողները պարզել են, որ դասընթացների մասնակիցների գրեթե կեսը գտնում են, որ ոստիկանությունը և հանրային առողջապահական կառույցները զգալի դերակատարում ունեն գենդերային բռնության կանխարգելման հարցում, մինչդեռ, ըստ ՄՄԿ ԲԶ կողմից իրականացված հասարակական կարծիքի հարցման արդյունքների՝ հասարակության սոսկ մեկ երրորդն է կիսում այդ կարծիքը:

Գնահատողները նշել են, որ գործընկերներին հաջողվել է գենդերային բռնության դեմ պայքարի ոլորտում ստեղծել շահառուների տարբեր սոցիալական ցանցեր, ինչը հետագայում նախապայմաններ կստեղծի մարդու իրավունքների տարբեր ոլորտներում աշխատող ինքնակազմակերպվող խմբերի ձևավորման համար: Կոնսորցիումի գործընկերները նաև միավորել են վերապատրաստման ծրագրի արդյունքները, ձեռքբերումներն ու քաղված դասերը, ներկայացրել են դրանք ԶԶ Կառավարություն, ինչն օգտագործվել է Հայաստանում գենդերային բռնության դեմ պայքարի Ազգային գործողությունների ծրագրի նախագծի մշակման ընթացքում:

**ՄՉՄԿ-ն նպաստում է Հայաստանում գենդերային բռնության դեմ պայքարի արդյունավետ քաղաքականության և ծրագրերի իրականացմանը**

ՄՉՄԿ-ն կարևոր մասնակցություն է ունենում Հայաստանում գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի և աշխատանքային խմբի աշխատանքներում: Աշխատանքային խումբը մշակել է Հայաստանում գենդերային բռնության դեմ պայքարի Ազգային գործողությունների 2011-2015թթ. ծրագրի նախագիծը, որի շրջանակներում ՄՉՄԿ կողմից կատարվել է միջազգային փորձի համեմատական վերլուծություն: Նոյեմբերի վերջին ԶԶ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում տեղի ունեցած Հայաստանում գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի նիստի ընթացքում ՄՉՄԿ ներկայացուցիչը ներկայացրել է այդ քննազավառում միջազգային փորձն ու տարբեր երկրների ազգային քաղաքականությունների և ազգային ծրագրերի ձեռքբերումները: Հանձնաժողովը նաև քննարկել է Հայաստանում գենդերային բռնության դեմ պայքարի Գործողությունների ազգային ծրագրի 2011-2015թթ. նախագիծը, ինչպես նաև աշխատանքային խմբի մշակած 2011թ. միջոցառումների տարեկան ցանկը:

**Պայքար կոռուպցիայի դեմ Արևելյան գործընկերության անդամ երկրներում. քաղաքացիական հասարակության տեսակետը**

ՄՉՄԿ-ն իսպանական «Ֆրիդե» վերլուծական կենտրոնի, ուկրաինական և մոլդովական Հանրային քաղաքականության ինստիտուտների հետ Սևծովյան համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացրել է «Պայքար կոռուպցիայի դեմ Արևելյան գործընկերության անդամ երկրներում. քաղաքացիական հասարակության տեսակետը» հետազոտությունը: Գործընկերները յուրաքանչյուր երկրում անցկացրել են հարցազրույցներ քաղաքացիական հասարակության ինստիտուտների, ազգային առաջատար ձեռնարկությունների, ինչպես նաև պետական մարմինների ու զարգացման գործընկերների ներկայացուցիչների հետ: Առանձին հետազոտությունների արդյունքներն այնուհետև միավորվել է մեկ միասնական փաստաթղթի մեջ, որը գործընկերները ներկայացրել են հանրությանը մի շարք միջոցառումների ընթացքում: Ծրագրի շրջանակներում ՄՉՄԿ գործադիր տնօրենը հոկտեմբերի վերջին Կիևում մասնակցել է «Քաղաքացիական հասարակության դերը հակակոռուպցիոն բարեփոխումների մշակման և իրականացման գործում. ուկրաինական փորձը» կլոր սեղանին:



Պետական և հասարակական կառույցների փորձագետները ՄՉՄԿ-ում քննարկում են հակակոռուպցիոն գործունեության մասին հաշվետվության նախագիծը: Նոյեմբեր 2010թ.: Երևան:

ԶԶ պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, գործարար սոցիալացիաների և զարգացման գործընկերների ավելի քան 20 ներկայացուցիչներ, նոյեմբերին քննարկել են «Պայքար կոռուպցիայի դեմ Հայաստանում. քաղաքացիական

հասարակության ձայնը» հետազոտության նախագծի հիմնական դրույթները: Հաշվի առնելով քննարկման ընթացքում հնչած առաջարկներն ու դիտողությունները՝ ներկայումս իրականացվում է հետազոտության հաշվետվության լրամշակում: 2011թ. հունվար-փետրվարի ընթացքում նախատեսվում է հետազոտության արդյունքների հիման վրա հրապարակել համառոտագրեր և քաղաքականության վերլուծություններ:

**ՄՇՄԿ օժանդակությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին**

ՄՇՄԿ-ն կոնսորցիումի իր գործընկեր չորս կազմակերպությունների՝ Եվրասիա համագործակցության հիմնադրամի, Երևանի մամուլի ակումբի, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության հետ համագործակցությամբ 2010թ. հոկտեմբերից մշակել և իրագործում է գործողությունների համալիր ծրագիր՝ ուղղված հայ-թուրքական հարաբերությունների մերձեցմանը:

2010թ. նոյեմբերին Կոնգրես հյուրանոցում հրավիրված ընդունելության ընթացքում Կոնսորցիումի գործընկերները հայտարարեցին «Օժանդակություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների մերձեցմանը» ծրագրի մեկնարկի մասին: Միջոցառմանը մասնակցում էին թուրքական գործընկեր կազմակերպությունների, կոնսորցիումի անդամների և հայաստանյան քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչներ, ինչպես նաև ԱՄՆ դիվանագիտական առաքելության պաշտոնյաներ: «Օժանդակություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների մերձեցմանը» ծրագրի գործընկերներից յուրաքանչյուրը պատասխանատու է ծրագրի առանձին բաժնի համար: Մասնավորապես, ՄՇՄԿ գործողություններն ուղղված են լինելու միջպետական համագործակցության խթանման հարցերին:

2010թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՄՇՄԿ նախաձեռնությամբ Երևանում, Գյումրիում և Իջևանում շուրջ երեք հարյուր փորձագետների և երիտասարդ մասնագետների մասնակցությամբ իրականացվեցին հանրային քննարկումներ հայ-թուրքական հարաբերությունների իրավական, քաղաքական և գործարար համագործակցության խնդիրների շուրջ:

2010թ. դեկտեմբերին ԱՄՆ Կոլումբիայի համալսարանի Մարդու իրավունքների հետազոտության ինստիտուտի «Խաղաղության հաստատում և իրավունքներ» ծրագրի և ՄՇՄԿ նախաձեռնությամբ, Շվեդիայի Արտաքին գործերի նախարարության օժանդակությամբ, Ծրագրի կոնսորցիումի անդամների և թուրքական յոթ գործընկեր կազմակերպությունների (Թուրք-հայկական գործարար հարաբերությունների զարգացման կենտրոն, «ԳԱՅԱ» հետազոտությունների ինստիտուտ, Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ, «Անադոլու Կուլթուր», Համաշխարհային քաղաքական զարգացումների կենտրոն, Իզմիրի տնտեսագիտության համալսարանի «Հաղորդակցություն» ֆակուլտետ, «Թուրքիա Գոնյուլյուկերի») ներկայացուցիչների մասնակցությամբ Ստամբուլում անցկացվեց Ծրագրի խորհրդատվական համաժողովը:

Համաժողովը հնարավորություն ընձեռեց կոնսորցիումի անդամներին և նրանց թուրք գործընկերներին ավելի խորն ըմբռնել Ծրագրի նպատակները, մեթոդներն ու գործողությունները: Աշխատանքային թեմատիկ քննարկումների ընթացքում գործընկերները մշակեցին 2011թ. գործողությունների ծրագիրն ու ժամանակացույցը, անդրադարձան տարբեր ծրագրերի միջոցները միավորելու ու հայ-թուրքական մերձեցման «չորրորդ ակթի» քաղաքացիական հասարակության նախաձեռնությունները ներդաշնակեցնելու հնարավորություններին: Գործընկերները նախաձեռնության հաջող իրագործման համար հատուկ կարևորություն տվեցին հաղորդակցման, համակարգման ու համագործակցության խնդիրներին:

Գործընկերները համաձայնեցին խորհրդատվական համաժողովի երրորդ նիստը հրավիրել 2011թ. գարուն-ամառ ժամանակահատվածում Երևանում:

*Տնտեսական և գործարար հարաբերությունները՝ հայ-թուրքական հարաբերությունների մերձեցման խթան*

ՄՇՄԿ ներկայացուցիչը նոյեմբերի 2-ին Կարսում մասնակցել է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ քննարկմանը: Քննարկումը կազմակերպել էր Թուրքական տնտեսական և սոցիալական ուսումնասիրությունների հիմնադրամը Ֆրիդրիխ Նաուման հիմնադրամի օժանդակությամբ: ՄՇՄԿ փորձագետը ներկայացրեց Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների զարգացման տնտեսական հեռանկարները՝ մասնավորապես շեշտելով, որ Կարսի տարածաշրջանի զարգացման բազմաթիվ հնարավորություններ են կորսվում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների ներկա վիճակի պատճառով: Ավելին, Արևելյան Թուրքիայի համար Հայաստանի հետ համագործակցությունը կարող է շրջափելի լինել Էներգիայի, սահմանային առևտրի և գյուղատնտեսության ոլորտներում: Տնտեսական և ենթակառուցվածքների համագործակցությունը և անբարենպաստ պայմաններում անգամ զարգացող բիզնես համագործակցության հետագա ուժեղացումը կարող է կարևոր շարժիչ ուժ ծառայել՝ Հայաստանի հետ մերձեցման օրակարգը Թուրքիայում առաջ մղելու գործում:



ՄՇՄԿ փորձագետ Աշոտ Խուրշուդյանը վարում է երիտասարդ գործիչների վերապատրաստման դասընթացը: Նոյեմբեր 2010թ.: Երևան:

**Երիտասարդները ՄՇՄԿ ծրագրերում**

*«Հակամարտության փոխակերպման հմտություններ». երիտասարդների վերապատրաստում*

Վեց երիտասարդ գործիչներ 2010թ. նոյեմբերի վերջին Երևանում մասնակցեցին Հանուն խաղաղության եվրոպական հասարակական կազմակերպությունների գործակցության շրջա-



Փոքր ՀԵԿ-երի երիտասարդ մասնագետները կառուցել են «աշտարակ» հաղորդակցվելով և բանակցելով ընդհանուր բարիքի կերտման վարժության արդյունքում: Նոյեմբեր 2010թ.: Երևան:

նակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված եվրոպական գործակցության (ԸՆԵԳ) ծրագրի շրջանակներում ՄՉՄԿ կողմից իրականացված վերապատրաստման դասընթացին: Հակամարտությունների կարգավորման ինստիտուտի (ՀԿԻ) հետ համագործակցությամբ կազմակերպված դասընթացի նպատակն էր զարգացնել երիտասարդ մասնակիցների հմտությունները հակամարտության փոխակերպման բնագավառում: Ձեռք բերած հմտությունները երիտասարդները կկիրառեն ի նպաստ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման:

**Արդյունավետ հաղորդակցման հմտություններ՝ երիտասարդ գործիչներին**

2010թ. հոկտեմբերին մեկնարկեց «Փոքր ՀԵԿ-երի տեխնիկական կարողությունների զարգացման» ծրագրի մասնակիցների համար վերապատրաստման դասընթացների հաջորդ փուլը՝ «Արդյունավետ հաղորդակցություն և ներկայացման հմտությունների զարգացում» խորագրով: Ծրագիրն իրականացնում է «Նորսկ Էներջի» ընկերությունն իր հայկական գործընկեր «ՀիդրաԷներգետիկա» ընկերության և ՄՉՄԿ հետ համագործակցությամբ: Ծրագիրը նպատակ է հետապնդում խթանել Հայաստանում փոքր ՀԵԿ-երի գործունեությունը և զարգացնել դրանց տեխնիկական կարողությունները: Ծրագիրը ֆինանսավորվում է Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության կողմից, դրան աջակցում են նաև Ամերիկայի, ՀՀ Էներգետիկայի նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարությունը, KfW-ի կողմից ֆինանսավորվող ԳՀՀ «Վերականգնվող Էներգիայի աջակցություն» ծրագիրը (GAFRE-KfW), Երևանի ճարտարապետական և շինարարության պետական համալսարանը:

**Համաժողովներ, սեմինարներ, իրադարձություններ**

**Եվրահիստեգրմանը նվիրված ՄՉՄԿ 6-րդ ամենամյա համաժողովը**

2010թ. նոյեմբերի 26-27-ը Երևանում տեղի ունեցավ «Եվրոպական հեռանկարները «Արևելյան գործընկերություն» ծրագրի շրջանակներում և Հայաստան-Եվրոպական միություն Անցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների գործընթացում» համաժողովը: Այն կազմակերպել էր ՄՉՄԿ-ն Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության և «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի օժանդակությամբ:

Համաժողովի նպատակը Հայաստանում բաղաբաղականության մշակման և որոշումների կայացման գործընթացում բաղաբացիական հասարակության և հասարակական կազմակերպությունների դերի բարձրացմանը նպաստելն էր: Վեց տարի

անընդմեջ կազմակերպվող եվրոպական ինտեգրմանը նվիրված համաժողովները դարձել են Եվրոպական միության հետ Հայաստանի Հանրապետության ինտեգրման գործընթացի ընթացքը փորձագիտական համայնքին և լայն հասարակությանը ներկայացնելու ու լուսաբանելու յուրօրինակ ամբիոն:

Համաժողովում զեկույցով հանդես եկան ՀՀ վարչապետ պրն. Տիգրան Սարգսյանը, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցերով նախկին հատուկ ներկայացուցիչ, ԵԱՀԿ Պառլամենտական վեհաժողովի նախկին նախագահ (2006թ.), Ստոկհոլմի խաղաղության հետազոտությունների միջազգային ինստիտուտի կառավարման խորհրդի նախագահ պրն. Գորան Լենմարկերը: Համաժողովը ողջույնի խոսքով բացեցին ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար պրն. Արթուր Բաղդասարյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար պրն. Ռաուլ դե Լուցենբերգերը:

Համաժողովին մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Ռուսաստանի, Չեխիայի, Դանիայի, Թուրքիայի, Շվեդիայի, ինչպես նաև եվրոպական և միջազգային կառույցների, այդ թվում՝ ԵՄ, ԵԱՀԿ, ԵԽ, ՆԱՏՕ ներկայացուցիչներ:

**Արևելք-Արևմուտք խաչմերուկ**

ՄՉՄԿ-ը նոյեմբերի վերջին ներկայացրեց իր նոր հրատարակությունը՝ «Արևելք-Արևմուտք խաչմերուկ» հոդվածաշարը, որն ամփոփում է Եվրաֆորում Արևելք-Արևմուտք ցանցի երկրների՝ Հայաստանի, Բելառուսի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի և Իսպանիայի, Չեխիայի և Շվեդիայի երիտասարդների մտքերն ու գաղափարները և անդրադառնում է հակամարտությունների կառավարման, մարդու իրավունքների, եվրոպական ինտեգրման և եվրոպական արժեքների տարածման խնդիրներին: Ժողովածուն հրատարակվել է Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի ներկայացուցչության օժանդակությամբ:



ՄՉՄԿ գործադիր տնօրենի Երախտիքի խոսքը ՖԷՀ ղեկավարությանը երիտասարդ վերլուծաբանների կարծիք բարձրաձայնելուն աջակցության համար: Նոյեմբեր 2010թ.: Երևան:

**ՄՉՄԿ ներկայացուցիչները ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ դիտորդական առաքելության կազմում**

2010թ. աշնանը ՄՉՄԿ ներկայացուցիչները մասնակցեցին Բուսինայի և Հերցեգովինայի մայրաքաղաք Սարաևոյում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Վերջիններս ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները գործի դրեցին ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ դիտորդական առաքելությունների կազմում 2010թ. նոյեմբերի 28-ին Մոլդովայի հանրապետությունում կայացած վաղաժամկետ խորհրդարանական և ղեկավարների 13-21-ը Բելոռուսիայում նախագահական ընտրություններին հետևելու ընթացքում:



Եվրոպական ինտեգրման ՄՉՄԿ 6-րդ ամենամյա համաժողովի ամփոփիչ նիստը: Նոյեմբեր 2010թ.: Երևան:

**Առանց հղումների իրավունքի քննարկում ՄՉՄԿ-ում**

Պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կառույցների և վերլուծական կենտրոնների, գործարար համայնքի և զարգացման գործընկերների բանախոսակցությունները ՄՉՄԿ իրավեցրով նայեցին մասնակցեցին «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական հասարակությունների փոխգործակցությունը. միջոց էն ինստիտուցիոնալ բացերը» խորագրով առանց հղումների իրավունքի քննարկմանը: Ամփոփելով քննարկման արդյունքները՝ ՄՉՄԿ-ն մշակել և գործընկերներին է ներկայացրել քաղաքականության համառոտագիր, որը հրապարակվել է նաև մեր պաշտոնական կայքում:

**ՄՉՄԿ գործադիր տնօրենը՝ ՊԱՍՕՍ-ի տնօրենների խորհրդի անդամ**

ՄՉՄԿ գործադիր տնօրեն Թևան Պողոսյանը նոյեմբերի 4-ին Բեռլինում ՊԱՍՕՍ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընտրվել է ՊԱՍՕՍ-ի տնօրենների խորհրդի անդամ:

**Արևելյան գործընկերության ազգային պլատֆորմի աշխատանքային խմբի հանդիպումը ՄՉՄԿ-ում**

Հոկտեմբերի 8-ին ՄՉՄԿ-ն հյուրընկալեց Արևելյան գործընկերության Զաղաքացիական հասարակության ֆորումի ազգային պլատֆորմի աշխատանքային խմբի երրորդ հանդիպումը:

**ՄՉՄԿ գործադիր տնօրենը՝ Զաղաքացիական հասարակության ֆորումի երկրորդ հանդիպմանը**

ՄՉՄԿ գործադիր տնօրենը նոյեմբերի 18-19-ը Բեռլինում մասնակցել է Արևելյան գործընկերության Զաղաքացիական հասարակության ֆորումի (ԶՀՖ) երկրորդ հանդիպմանը: Գործադիր տնօրեն Թևան Պողոսյանը՝ որպես Արևելյան գործընկերության երկրների ներկայացուցիչ, ընտրվել է ԶՀՖ չորրորդ աշխատանքային խմբի համահամակարգող:



# ՄՉՄԿ-ն՝ մամուլում

**ՄՉՄԿ ներկայացուցիչը ԵԱՀԿ համաժողովում**

ՄՉՄԿ ներկայացուցիչը Հայաստանի քաղաքացիական հասարակությունը ներկայացնող պատվիրակության կազմից նոյեմբերի վերջին Աստանայում (Ղազախստան) մասնակցել է ԵԱՀԿ երկրների ՀԿ-ների և ԵԱՀԿ քաղաքացիական հասարակության Չուգահեռ համաժողովին: ԵԱՀԿ երկրների ՀԿ-ների համաժողովի ընթացքում քննարկվեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության, զինադադարի խախտման, ուժի չկիրառման պայմանագրի ստորագրման անհրաժեշտության, ԵԱՀԿ անդամ երկրների միջև անհանդուրժողականության՝ մասնավորապես Ադրբեյջանի կողմից պետական մակարդակով հակահայկական քարոզչության իրականացմանը վերաբերող խնդիրներ: ԵԱՀԿ քաղաքացիական հասարակության Չուգահեռ համաժողովի շեշտադրումներն առավելապես ուղղված էին մարդու իրավունքների պաշտպանության ոլորտին և ավելի արմատական-քննադատական էին այդ իրավունքները չհարգող երկրների հանդեպ: ՄՉՄԿ փորձագետն իր ելույթում անթույլատրելի համարեց ԵԱՀԿ անդամ որևէ պետությունում ազգային խտրականության, որևէ այլ ազգի դեմ ատելություն սերմանելու և ռազմական հռետորաբանություն տարածելու դրսևորումները, քանի որ նման գործելակերպը կարող է միայն խաթարել հակամարտությունների կարգավորման գործընթացը, ավելացնել լարվածությունը այս կամ այն տարածաշրջանում:


## ՄՉՄԿ-ի մասին՝ մանրամասն

2000թ. մարտին հիմնադրված Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄՉՄԿ) Հարավային Կովկասի առաջատար վերլուծական կենտրոն է, որը համախմբել է հանրային և մասնավոր հատվածներում խոր ակադեմիական գիտելիքներ և աշխատանքային հարուստ փորձ ունեցող բարձրակարգ վերլուծաբանների և հետազոտողների: Մեզ միավորում են ընդհանուր արժեքները, նվիրվածությունը մասնագիտական գերազանցության և էթիկայի բարձր սկզբունքներին: Մենք սերմանում/զարգացնում ենք քաղաքականության մշակման ու իրականացման մասնակցային գործընթացը, մշակում և ներդրում տարածաշրջանային, ազգային և տեղական քաղաքականության նորարարական արդյունավետ գործիքներ ու մեթոդներ:

Մեր շահառուներին, այդ թվում՝ պետական կառավարման մարմիններին, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կառույցներին և զարգացման գործընկերներին ՄՉՄԿ-ն տրամադրում է որակյալ խորհրդատվություն, քաղաքականության վերլուծության և զարգացման/մշակման ծառայություններ: Կենտրոնը ստեղծում է նաև քաղաքականության ներկայացման/հաղորդակցության նորարարական գործիքներ և ձևավորում երկխոսության համար նպաստավոր միջավայր: Կենտրոնը երկրում և տարածաշրջանում որոշումների կայացման գործընթացին քաղաքացիների մասնակցության նոր արդյունավետ տեխնոլոգիաների մշակման և ներդրման առաջամարտիկն է: Առաջին անգամ 2004թ. ներդրված մեթոդները շարունակականորեն կատարելագործվել և վերածվել են երրորդ սերնդի գործիքների: Իր տասնամյա գործունեության ընթացքում ՄՉՄԿ-ն դարձել է գիտելիքի և գերազանցության լավագույն կենտրոններից մեկը՝ ճանաչվելով որպես հուսալի և ցանկալի գործընկեր ինչպես մեր տարածաշրջանում, այնպես էլ ողջ աշխարհում:

**Էլ. փոստ՝** mail@ichd.org  
**Հեռ.՝** +374 (10) 582638, +374 (10) 528321;  
**Տարբ.՝** +374 (10) 527082  
**Հասցե՝** Երևան 0001, Սայաթ Նովա 19  
«Անի Պլազա» բիզնես կենտրոն

**Դիտեք մեզ այստեղ՝**  [www.vimeo.com/ichd](http://www.vimeo.com/ichd)  
**Հետևեք մեզ այստեղ՝**  <http://twitter.com/ICHDthinktank>  
**Միացեք մեզ այստեղ՝**  <http://groups.to/ichd-thinktank>  
**Այցելեք մեզ այստեղ՝** [www.ICHD.org](http://www.ICHD.org)

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն  
ՄՉՄԿ Լրատուի տպագիր տարբերակը կարող էք ձեռք բերել ՄՉՄԿ գրասենյակում  
ԿՐՏԱՏԵՆԸ ԹՂԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ  Ստանդի կանաչ